



ՄԱՍՆԱՎՈՐ ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ԱՍՏԻՇԱՆԻ ՏՎՉՈՒԹՅՈՒՆ

Սույն թվականի ապրիլի 22-ին, չորեքշաբթի օրը, հոգևոր ճեմարանի հանդիսությունների դաჩիճում, նախագահությամբ Մայր Աթոռի դիվանական գերաշնորհ Տ. Ներսէս արքեպոս. Պողապալյանի, տեղի ունեցած Մայր Աթոռի երեք արելա հայրերի վարդապետական թեզերի բանավոր պաշտպանություն:

Հանդիսությանը ներկա էին Մայր Աթոռի մասնակիցներ, հոգևոր ճեմարանի դաւախութական կազմը, ուսանողությունը և բազմաթիվ հյուրեր:

Մայր Աթոռի երիտասարդ մարդաներ Տ. Կոմիտաս արելա Հովհաննեանը, Տ. Զավելին արելա Խաչատրյանը և Տ. Պարգև արելա Մարտիրոսյանը նախական իրենց պատրաստած թեզերը ներկայացրել էին Վեհափառ Հայրապետին: Նորին Սրբության հանձնարարությամբ կազմված հանձնաժողովը, որի կազմում էին Սրբաւայան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ գերաշնորհ Տ. Գարեգին եպս. Ներսիսյանը (նախագահ), Մայր Աթոռի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի ղեղինանոր քարտուղար, հոգևոր ճեմարանի վաստակաշատ դասախոս պրես. Պարգև Շահբագյանը և «Էջմիածին» ամսագրի խմբագիր, բանագիրական գիտությունների թեկնածու, հոգևոր ճեմարանի դասախոս պրես. Երվանդ Մելքոնյանը, քըն-

նելով թեզերը, իրենց գեկուցագիրը ներկայացրել էին Վեհափառ Հայրապետին:

Վարդապետական թեզերի բանավոր պաշտպանության հանդիսությունն սկսվեց ժամը 11-ին: Նախ իր թեզի հիմնական դրույթները ներկայացրեց Տ. Կոմիտաս արելա Հովհաննեանը, որի ուսումնասիրության նյութն էր Վարդան Արևելցու «Մեկնութիւն Դանիելի» գործը հետևյալ ընդգրկումով. Ընդհանուր ակնարկ մեկնաբանական գրականության մասին, Վարդան Արևելցու կյանքը և մատենագրական վաստակը, «Մեկնութիւն Դանիելի» երկի արժանիքները:

Տ. Կոմիտաս արելա Հովհաննեանի ուսումնասիրությունն ու բանավոր պաշտպանությունը ու բանավոր պատկերագրությունը լԱՎ:

Այս կարդացվեց հանձնաժողովի կարծիքը Տ. Զավելին արելա Խաչատրյանի թեզի վերաբերյալ, որի թեման էր «Խաչված վարագույնների պատկերագրություն», հետևյալ ընդգրկումով. Վարագույրը որպես հայ կերպարվեստի բաղկացուցիչ մաս, Աստվածաբանական - դավանաբանական միտքը և քրիստոնեական խորհրդանշանը վարագույնների պատկերագրության մեջ:

Տ. Զավելին արելա Խաչատրյանի ներկայացրած ուսումնասիրությունը և բանավոր պաշտպանությունը գնահատվեց ԳԵՐԱԴԱՆՑԾ:



Կառավարության պատմություն Սովորություն կատարելու համար կազմակերպություն

Սապա իր թեզի բանավոր պաշտպանությամբ հանդես եկավ Տ. Պարգև արեղա Մարտիրոսյանը: Նրա ուսումնասիրության թեման էր՝ «Աստվածանաչման ճանապարհը ըստ քիստոնեական վարդապետության և Յոդայի ուսումների», իետևալ ընդորկումով. Աստվածանաչման հարցը, Սրբայան և արևմտյան ավանդությունները, Աստվածանաչումն ըստ քիստոնեական վարդապետության, Աղոթքը և Աստվածանաչումը, Աստվածանաչման խնդիրը ըստ Յոդայի և Անտրոպուֆիայի, Աստվածանաչման երկու ուղիների համեմատությունը:

Տ. Պարգև արեղա Մարտիրոսյանի ներկայացրած ուսումնասիրությունը և բանավոր պաշտպանությունը գնահատվեց ՔԱ-ԶԱԼԱՎ:

Ակնուինուն, հանդիսության վերջում Գերաշնորի Տ. Ներսես արքեպոս. Պողապալյանը, բարձր գնահատելով կատարված աշխատանքները, քաջալերեց արեղա հայրերին և խորհրդությունը տվեց շարունակել իրենց ուսումնասիրությունները:

Ապրիլի 30-ին, հինգշաբթի օրը, ժամը 12-ին, Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց կեկեցում սկսվեց «Կանոն մասնաւոր իշխանութեան» վարդապետական աստիճանի տվյալության արարողությունը:

Վեհափառ Հայրապետի բարձր կարգադրությամբ Տ. Արամ արեղա Բոյաջանի, Տ. Կոմիտաս արեղա Հովհաննեսի, Տ. Զավեն արեղա Խաչատրյանի և Տ. Պարգև արեղա Մարտիրոսյանի վարդապետական աստիճանների շնորհումը կատարեց Տ. Ներսես արքեպոս. Պողապալյանը: Արարողությանը ներկա էին Մայր Աթոռի և Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցու հոգևորականությունը, բազմաթիվ հավատացյալներ:

Արարողության ավարտից հետո գերաշնորի Տ. Ներսես արքեպոս. Պողապալյանը նետելալ բովանդակալից խոսքն ուղղեց նորմածա վարդապետներին.

«Գնացեք այսունետև, աշակերտեցեք զամենայն հեթանոս, մկրտեցեք զնոսա յանուն Հօր և Որդույ և Հոգույն Սրբոյ» (Մատթ. 16: 19):

Վերաստին եկել ենք Օշական, իբրև աղոթավոր ովաստավորներ ծննդարելու այս սուրբ եկեղեցում, Հայց. Եկեղեցու եռամեծ վարդապետ՝ Ս. Մեսրոպ Մաշտոցի շիրմի առաջ: Եվ այս առթիվ, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանության համար աղոթեն իսկ ավանդություն դարձած, մասնավոր վարդապետի իշխանության տվյալության կարգ կատարելու այստեղ:

Որքան միախարական է այսօր գտնվել

այստեղ, չորս խոստումնալից արեղա հայրերի հետ, որոնք ծննդադիր և երկրուղած, Սույր Հոգուց աստվածային ու երկնակալու շնորհներ են ստանալու և, որոնց ականջներում կրկին անգամ արձագանքելու է Քրիստոսի վերջին պատգամը՝ «Գնացեք այսունետև, բոլոր հեթանուններին սովորեցրեք, մկրտեցք նրանց, Հոր, Որդու և Սույր Հոգու անունով»:

Այս սրբազն պահին, ակամա երևակայությամբ փոխադրվում ենք 5-րդ դար, երբ Ս. Մեսրոպի միջոցով երկնվեց հայ գիրը, երբ մի խումբ հայոցայի վարդապետներ՝ Սահակ-Մեսրոպյան ոգնորությամբ դպրոցներ բացեցին, հայ մարդու քիմքը նորաստեղծ այրութենով քաջցրացրին, տգիտության խավարը հայածնեցին գիտության լույսով և մեզ զինեցին այնպիսի զրախով, որ բոլոր դարերում, բոլոր դժվարությունները կարողացանք դիմագրավել: Մեսրոպյան գիտության լույսի այդ ծարակը այս շիրմը մեծ վարդապետի, այստեղից ամպելու և վերստին լիցքավորվելու համար:

Տվյալության սրբազն արարողության ընթացքում, երբ Գրիգոր Տաթևացու աղոթքներն էի ընթերցում, նկատում էի, որ դուք ևս ոչի-ուշով հետևում էիր դրանց: Վրատահ եմ, որ ձեր ուշադրությունից չփրիսեց, ինչ-որ այնտեղ նշվում էր Սույր Հոգու կենարար զորության ձեր վրա իշնելու մասին, որպեսզի համարձակաձայն բարբառով քարոզեք մեր Տիրոց Հիսուս Քրիստուի անանց խոսքը՝ Բանը:

Կատահ եմ ձեր ստացած քարոզական զորությունը, որի արտաքին նշանը ձեր ձեռքում բռնած վարդապետական գավազանն է իմնելու, ձեզ տալու է իմաստություն և զորություն: Եվ այդ ուժը՝ իմաստության և զորության, որ հետեւ նոր ստացաք այս կամարների տակ, քարոզական ուժն է եղել մեր եռամեծ վարդապետների, Ս. Գրիգոր Լուսավորչից մինչև մեր օրերը, հար և նման այն հրեղեն լեզուների, որոնք իշան առաքյալների վրա Հոգեգալստյան օրը Վերաստան մեջ:

Այս առթիվ բերում եմ նաև Վեհափառ Հայրապետի օրինությունները ձեզ, քիչ նետ այստեղից գնալու ենք Էջմիածնի՝ մայրավանք, Վեհափառ Հոր մոտ, անձամբ ստանալու Նրա օրինություններն ու հայրական իրատները: Իմ և իմ եռայրակիցներին ցանկությունը այն է, որ դուք լինեք «մշակ առանց ամօթոյ», լինեք ովտապահ, ավանդապահ և հայունասեր:

Ձեր հետագա կյանքի օրերին, թող Տե-

որ զորավիզ լինի ձեզ: Ձեր կյանքի ուղին լինի լուսավոր և կյանքում երբեք չընկըրկեք, չտկարանաք: Վատահ ևս միրով և համոզումով եք հանձն առել ծառայության լուծը մեր բազմաշարշար, բայց միշտ հարուցյալ Հայց. Եկեղեցու:

Գիտակցված գոհագործում թող լինի ձեր և մեր կյանքը, տրված մեր ժողովողին ու մեր Եկեղեցուն: Լավ է աշխարհում անհատի կյանքը զոհվի մի վսեմ գաղափարի ճանապարհին, քան թե այն կորչի հումագետուս: Կյանքում գիտակցված զոհողոթյունն է, որ անմահության է առաջնորդում. բոլոր հավանաբար անմահության շիամենք, բայց կարող ենք այդ կառույցի մեկ քարը լինել:

Թող ձեր հետագա ծառայությունը ձեր ճակատի թագը լինի: Սուրբ Հոգու շնորհներով օժովված և հոգևմբ պայծառացած ձեր ծառայության նոր հանգրվանին, մաղթում ևս ձեզ հաջողություն:

«Հունձք բազում են և մշակք սակաւք». ամեն»:

Վերաբառնալով Մայր Աթոռ, նորընծավարդապետները ներկայացան Վեհափառ Հայրապետին՝ ստանալու Նրա հայրական օրինությունը: Նորին Սրբությունը, շնորհավորելով նորընծաներին, մայթեց, որ այսուհետև ևս, կրկնապատկելած եռանդով շարունակեն իրենց ծառայությունները Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին և հավատացյալ հայ ժողովողին: Այս նշանակալից պահի առթիվ Վեհափառ Հայրապետը նըրանց պարգևատրեց վարդապետական լանջախաչերով:

*
*
*

«Էջմիածն» ամսագրի խմբագրությունը ևս շնորհավորում է նորընծավարդապետներին այն համոզմամբ, որ նրանք իրենց գիտական ու եկեղեցական գործունեությամբ արժանի հետևորդները կհանդիսանան Հայ Եկեղեցու պրալույս վարդապետների, ծառայելով ի բարօրություն Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և համայն հայ ժողովը:

